«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Բարոյական, գեղագիտական արժեքների ձևավորումը «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման ընթացքում:

ԱՌԱՐԿԱ՝ Հասարակագիտություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Ռուզաննա Գևորգյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Սևանի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոց

Բովանդակություն

1. Ներածություն.....3

2. Արժեքներն ու դրանց ուղղված հետազոտությունները 6

3. Հասարակագիտություն» առարկայի կրթական ներուժը , դերը արժեքների ձևավորման գործում 8

4. Ի՞նչ է բարոյական դաստիարակությունը, ո՞րն է նրա նպատակը.....9

5. Բարոյական արժեքների ձևավորումը «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման ընթացքում.....12

6. Գեղագիտական դաստիարակություն: Գեղագիտական արժեքների ձևավորումը «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման ընթացքում.....15

7. Եզրակացություն.....19

8. Օգտագործված գրականության ցանկ.....21

Ներածություն

Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Փոփոխություններն ընդգրկել են սոցիալական կյանքի բոլոր ոլորտները և անմիջականորեն ազդում են երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշիչների վրա: Լինելով այդ գործընթացի մասնակից, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը, նոր սերնդի առջև ծառանում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրները: Ժամանակակից կյանքում մշակութային, քաղաքական, սոցիալական փոփոխությունների հետ մեկտեղ փոխվում են նաև անձի արժեքները, աշխարհընկալումները, վարքաձևերը, ինչպես նաև աշխարհի, մարդկանց, բնության հետ հարաբերությունները: Այս տեսանկյունից այժմյան հասարակությունում ավելի արդիական են դառնում մարդու արժեքային կողմնորոշումները,մարդ-հասարակություն փոխհարաբերությունները հասկանալու և վերլուծելու միտումը, արժեքների տեղը և դերը՝ որպես անձի ինքնության բաղադրիչ դիտարկելը:

Վերջին երկու տասնամյակում հայ իրականության մեջ արժեքների փոխակերպումները շարունակակն բնույթ են կրում: Այս գործընթացը մեծապես պայմանավորված է տարբեր ուղղորդում ունեցող տեղեկատվական հոսքերով,տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմամբ, համաշխարհային տեղեկատվական միջավայրի ձևավորմամբ: Այսօր տեղեկատվական դաշտը թելադրում է արժեհամակարգի ձևավորման սեփական կանոնները: Մերօրյա ՁԼՄ-ները ցավոք, դաստիարակչական գործառույթը համարում են ոչ շահութաբեր՝ առաջնային տեղ հատկացնելով ժամանցայինին: Այս ճանապարհին ետին պլան են մղվում ազգային, պետական, մշակութային, քաղաքակրթական արժեքները, ինչը դառնում է հանրության արժեհամակարգի ձևախեղման պատճառ: Փոխարենը ժարգոնային խոսք և խաթարված արժեքներ ներկայացնող զվարճալի հաղորդումներն ու հեռուստասերիալները, սեռական, կրոնական և հոգեբանական շեղումներ քարոզող կայքերը, սոցիալական ցանցերում առկա հաճախ վտանգավոր ուղղորդումները, գտնում են իրենց սպառողին:Եվ ամենից հաճախ սպառողը հենց դպրոցականն է, ով չունի կայացած արժեհամակարգ, սոցիալական վարքի կարգավորման մեխանիզմներ և առավել հակված է ընդօրինակել շրջապատին:

Գաղտնիք չէ, որ հենց դպրոցական տարիքում է, որ ձևավորվում է մարդու աշխարհընկալաման,աշխարհայացքային և, առհասարակ, առաջնային արժեքների համակարգը: Այս շրջանում է, որ անչափահասը սկսում է ակտիվորեն վերաիմաստավորել իր նախկին մոտեցումները, փորձում է դուրս գալ ավագների ազդեցության ոլորտներից, նրա համար ավելի կարևոր է դառնում շրջապատի կարծիքը, փորձում է հարմարվել նրանց կողմից ընդունելի նորմերին և հաստատվել տարեկիցների միջավայրում:Իսկ դպրոցականը վաղվա արժեքների կրողն է, ուստի կարևոր է այսօր արդեն իսկ ներարկել առողջ արժեքներ և ապագայի հասարակության համար պատրաստել հայրենասեր,քաղաքակիրթ քաղաքացիներ: Ելնելով նրանից, որ նոր սերնդի համար ժամանակակից աշխարհն իր արժեքային համակարգով բավականին բարդ է ու անկանխատեսելի, կրթության մեջ կարևորվում է արժեհամակարգի ձևավորումը: Այն կարևորվում է նաև այն պատճառով, որ որոշակի արժեքային համակարգի հենքի վրա կառուցված գործողությունները ճանաչելի են և հետևաբար ընդունելի, քանզի դրանք սկիզբ են առնում ազգային, համամարդկային, համընդհանուր սկզբունքներից, նորմերից և օրենքներից:

Հետազոտական աշխատանքը վերաբերում է բարոյական, գեղագիտական արժեքների ձևավորմանը «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման ընթացքում: Թեման ընտրելիս հաշվի եմ առել թեմայի արդիականությունը և ժամանակակից հասարակության առջև ծառացած խնդիրները:

Հետազոտության արդիականությունը - Հասարակական կյանքի անբաժանելի մաս հանդիսացող կրթությունը բոլոր դարաշրջաններում ուղղված է եղել հասարակության պահանջների բավարարմանը: Կրթության նպատակը միշտ եղել է անփոփոխ՝ աճող սերունդը նախապատրաստել կյանքին, ձևավորել տվյալ ժամանակաշրջանի համար հասարակության լիարժեք, ակտիվ անդամներ, իսկ կրթության խնդիրներն անընդհատ փոփոխվել են՝ պայմանավորված նոր հասարակական պահանջների ձևավորմամբ,տվյալ հասարակության տնտեսական,գիտական,մշակութային զարգացմամբ: Թեմայի արդիականությունն էլ հենց կայանում է նրանում ,որ նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման ,կրթության գործում լուրջ անելիքներ ունի հայ դպրոցը,որի գերնպատակն է կերտել բարոյական,ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ:

Հետազոտության նպատակը - Հետազոտական աշխատանքի նպատակն է հիմնավորել «Հասարակագիտություն» առարկայի դերն ու կարևորությունը անձի

արժեհամակարգի ձևավորման գործում:Դասաժամերի ընթացքում բացահայտել,թե առօրյայում որևէ քայլ կատարելիս կամ իրենց առջև ծառացած խնդիր լուծելիս, ինչ արժեքներով են սովորողները առաջնորդվում,ինչպես են վերաբերում բարոյական արժեքներին և որքանով տեղ ունի գեղեցիկը նրանց կյանքում:

Հետազոտության մեթոդները - Հետազոտություն կատարելու ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները.

- վերլուծել և ընդհանրացվել են մանկավարժական առաջավոր փորձի վերաբերյալ աշխատությունները,
- իրականացվել են քննարկումներ, զրույցի, դիտման մեթոդներ,
- ուսումնասիրվել են սովորողների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքները:

Արժեքներն ու դրանց ուղղված հետազոտությունները

«Արժեք» բառն տարբեր բառարաններում ունի տարբեր իմաստներ: Ֆրանսերենում այն նշանակում է արժանի լինել, Օքսֆորդի բառարանում «արժեք» թարգմանաբար նշանակում է, որ ինչ-որ բան արժեք ունի, կարևոր է և օգտակար:Հայերեն բառարանում ևս տրվում է «արժեք» հասկացության մեկնաբանությունը որպես ուշադրության արժանի հատկություն,նշվում էվերջինիս օգտակարության մասին:Այսինքն գրեթե բոլոր մեկնաբանություններում «արժեք» հասկացությանը տրվում է նշանակալիի,կարևորի մեկնաբանություն:

Արժեքների ուսումնասիրության մեջ գոյություն ունեն բազմաթիվ տեսություններ: Դրանցից է Մ. Մեսսեյի տեսությունը,որտեղ հեղինակը գտնում է, որ մարդկանց արժեքները ձևավորվում են մի շարք փուլերի ընթացքում: Առաջին փուլը «դրոշմի» փուլն է, որը տևում է մինչև 7 տարեկանը: Ըստ Մ. Մեսսեյի՝ երեխաներն այս փուլում նման են «սպունգի», կլանում են այն ամենը, ինչը տեղի է ունենում իրենց շրջապատում և ընդունում են գրեթե ամեն ինչ որպես ճշմարտություն, հատկապես, եթե դա արվում է ծնողների կողմից: Երկրորդ փուլը «կրկնօրինակման» փուլն է, որն ընդգրկում է 8-13 տարեկան հասակը. երեխաները կրկնօրինակում են մարդկանց, մասնավորապես՝ իրենց ծնողներին: Երրորդ փուլը «սոցիալականացման» փուլն է, որը տևում է 13-ից մինչև 20 տարեկանը: Այս փուլում մարդը հիմնականում իր վրա է կրում հասակակիցների ազդեցությունը, և ըստ Մ. Մեսսեյի՝ 21 և ավելի բարձր տարիքի մարդկանց արժեքների ձևավորման վրա կարևոր ազդեցություն ունեն նշանակալի հուզական իրադարձությունները:

Արժեքների բնույթի մասին մեծ հետազոտություն և առանձին տեսություն է մշակել Շ. Շվարցը: Ըստ հեղինակի, երբ մենք մտածում ենք մեր արժեքների մասին, մենք մտածում ենք, թե ինչն է մեզ համար կարևոր կյանքում: Մեզանից յուրաքանչյուրն ունի բազմաթիվ արժեքներ (օրինակ՝ ձեռքբերման, անվտանգության, կամեցողության)՝ կարևորության տարբեր աստիճաններով: Որոշակի կոնկրետ արժեք կարող է կարևոր լինել մեկի, բայց բացարձակ անկարևոր՝ մեկ այլ մարդու համար: Արժեքների տեսություններում կարևորվում է այն հայեցակարգը, որտեղ առանձնացվում են արժեքների ներքոնշյալ հիմնական հատկանիշները.

1. Արժեքները համոզմունքներ են: Մարդիկ, որոնց համար անկախությունը կարևոր արժեք է, «սթափվում» են, երբ նրանց անկախությունը վտանգվում է, հուսահատվում են, երբ անկարող են լինում այն պաշտպանելու, և վերջապես երջանկ են, երբ կարող են վայելել այն:
2. Արժեքները կապված են ցանկալի նպատակների հետ,որոնք մոտիվացնում են գործողությունները: Մարդիկ, որոնց համար հասարակակն կարգը, արդարությունը կարևոր արժեքներ են, մոտիվացված են հետապնդել այդ նպատակները:
3. Արժեքները լայն և ընդգրկուն հասակացություններ են : Այս հատկանիշը տարբերակում է արժեքներն ավելի նեղ հասկացություններից, ինչպիսիք են նորմերը և մոտեցումները, որոնք սովորաբար վերաբերում են կոնկրետ գործողությունների, օբյեկտների կամ իրավիճակների:
4. Արժեքները ծառայում են որպես սկզբունքներ կամ չափանիշներ:Արժեքներն ուղղորդում են գործողությունների,մադկանց, իրավիճակների գնահատումը կամ ընտրությունը:Մարդիկ որոշում են, թե ինչն է լավ, ինչը ՝ վատ,արդարացնում կամ մեղավոր են ճանաչում, գործում կամ խուսափում են ՝ հիմնվելով իրենց համար թանկ արժեքների հնարավոր հաջորդականության վրա:
5. Արժեքներն դասավորվում են ըստ կարևորության:Մարդկանց արժեքներն ձևավորում են արժեքի առաջնահերթությամբ դասավորված համակարգ,որը բնութագրում է նրանց որպես անհատներ,արդյո՞ք նրանք կարևորություն են տալիս ավելի շատ ձեռքբերմանը,քան արդարությանը, նորարարությանը կամ ավանդականին:
6. Մարդու գործողություններն ուղղորդվում են բազմաթիվ արժեքներով: Ցանկացած վարքագծի կամ վերաբերմունքի վրա ազդում են ոչ թե մեկ, այլ բազմաթիվ արժեքներ:

Ըստ Շ.Շվարցի՝ վերը թվարկված առանձնահատկությունները վերաբերում են բոլոր արժեքներին:

Ամփոփելով արժեքների մասին հետազոտությունները՝ մենք տեսնում ենք, որ արժեքներն առանցքային են մարդկային մտքի, զգացմունքների և վարքագծի մեջ: Դրանք հանդես են գալիս որպես վարքի սկզբունքներ կամ ստանդարտներ, անձի դատողություններն այն մասին, թե ինչն է կարևոր կյանքում:

«Հասարակագիտություն» առարկայի կրթական ներուժը , դերը արժեքների ձևավորման գործում

Հայաստանում իրականացվող կրթական բարեփոխումների գործընթացում բացառիկ կարևորություն ունի « Հասարակագիտություն » առարկան:Բացի զուտ առարկայական խնդիրների ուսուցումից,հասարակագիտությունը լուրջ առաքելություն ունի քաղաքացիական դաստիարակության, քաղաքացու ձևավորման գործում:Ինչպես հանրակրթական այլ առարկաների, այնպես էլ հասարակագիտության պարագայում նպատակները ներառում են գիտելիքների, հմտությունների և արժեքների ուսուցումը,որոնք մանրամասն շարադրված են առարկայական չափորաշիչներում:

Հասարակագիտությունը իր մեջ ներառելով գիտելիքներ մի շարք կարևորագույն բնագավառներից, օժտված է վիթխարի կրթական ներուժով, քանի որ այն հիմնական առարկան է,որ ձևավորում է մարդու աշխարհայացքը,մտածելակերպը,արժեքային համակարգը,ինչպես նաև վերաբերմունքն իր և այլոց հանդեպ:Հասարակագիտության ուսուցումը ապագա քաղաքացուն հնարավորություն է տալիս իր առջև ծառացած խնդիրների պատասխանը որոնել ոչ թե տարերայնորեն, տեղեկատվական հեղեղի ճնշման ներքո,այլ՝ օգտագործելով այն բոլոր հմտությունները, գիտելիքները և արժեքային մոտեցումները, որ նրա սեփականությունն են դառնալու դպրոցական նստարանից: Հասարակագիտությունը որպես հոգևոր մշակույթի տարր օժտված է անձի ձևավորման,նրա մտավոր, ստեղծագործական և հաղորդակցական կարողությունների զարգացման ներուժով: Եթե այլ առարկաները,իրականացնելով իրենց կոնկրետ խնդիրները,հընթացս նաև նպաստում են անձի ձևավորմանը, ապա հասարակագիտության հիմնական գործառույթը անձի ստեղծումը և ինքնաստեղծումն է:Հասարակագիտության ուսումնասիրումը սովորողներին օժտում է ինքնուրույնությամբ,որի շնորհիվ ուսուցումը ոչ թե ընկալվում է որպես պարտադրանք, այլ ՝ որպես յուրաքանչյուր մարդու հնարավորությունները մեծացնող գործոն:

Հասարակագիտություն առարկան իր քաղաքացիական կրթություն բաղադրիչի միջոցով նպաստում է ժողովրդավարական հիմնարար արժեքների յուրացմանն ու քաղաքացիական հասարակության ձևավորմանը: Մնացած բաղադրիչները՝ գեղագիտություն, բարոյագիտություն ,տնտեսագիտություն, իրավագիտություն, հոգեբանություն, քաղաքագիտություն և փիլիսոփայություն, ևս նպաստում են տարատեսակ արժեքների ձևավորմանը: Հասարակագիտության ամբողջական ուսուցումն արդի իրողությունների հրամայական պահանջ է:

Ի՞նչ է բարոյական դաստիարակությունը, ո՞րն է նրա նպատակը

Այսօր ողջ աշխարհում ձևավորվել է մի իրավիճակ, երբ սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում տեղի են ունենում արմատական փոփոխություններ: Հասարակության մեջ ակներև են դառնում բարոյական ավանդական նորմերի անկումը, կողմնորոշումը դեպի կեղծ մշակութային արժեքները: Գիտատեխնիկական հեղափոխությունը կարող է հանգեցնել սոցիալական լուրջ հետևանքների, եթե չուղեկցվի համապատասխան բարոյական զարգացմամբ: Այս պայմաններում հենց դպրոցն է ի զորու ապահովելու աճող սերնդի բարոյական դաստիարակությունը ՝ ձևավորելով մարդասիրության, հայրենասիրության, արժանապատվության բարձր հատկանիշներ:

Այժմ խոսենք այն մասին, թե ի՞նչ է բարոյական դաստիարակությունը և որո՞նք են դրա նպատակները:

Բարոյական դաստիարակությունը հասարակական գիտակցության այն ոլորտներից է, որը կյանքի բոլոր բնագավառներում մարդկանց վարքը կարգավորելու գործառնություն է կատարում: Այն մեծ դեր է խաղում անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման համար:Բարոյական դաստիարակության տեսական հիմքերը բխում են բարոյագիտությունից,որն ուսումնասիրում և մշակում է բարոյական վարքագծի չափանիշներ՝ համամարդկային արժեքների և հասարակության կողմից ներկայացվող էթիկական պահանջների համադրման եղանակով:Բարոյականության հիմնական չափանիշը բարոյական վարքագիծն է. այն դրսևորվում է հասարակական հարաբերություններում և բնութագրվում է հետևյալ համամարդկային արժեքներով.

- Բարությամբ՝ մարդասիրական վարքագծով, բարյացակամ վերաբերմունքով աշխարհի նկատմամբ:
- Արդարամտությամբ. այս վարքագծին բնորոշ է սեփական և դիմացինի գործողությունների ճշմարիտ և օբյեկտիվ գնահատումը:
- Հանդուրժողականությամբ՝ ներողամիտ վաքագծով,սխալվելու հնարավորության ընդունմամբ:

Իսկ բարոյական դաստիարակության նպատակն անձի բարոյական զարգացումն ու ձևավորումն է: Մարդու բարոյական զարգացումը շարունակվում է նրա ամբողջ կյանքի ընթացքում: Այն չընդհատվող գործընթաց է: Բարոյական զարգացմանը նպաստում են

մարդկանց, հասարակության հետ անձի շփումները,հաղորդակցումները, որոնք անառարկելիորեն ներգործում են նրա գործողությունների, արարքների վրա, ձևավորում նրա անձը: Բարոյական դաստիարակության նպատակներից է նաև այն, որ մարդը յուրացնելով հասարակության կողմից, ընդունված բարոյական նորմերը, կատարի բարոյական գործողություններ ու արաքներ՝ հոգուտ հասարակության և հոգուտ մարդու, անի այն,ինչը համամարդկային է ու արժեքավոր: Բարոյական զարգացում ունեցող մարդը կոռեկտ է, պարկեշտ, առաքինի, բարեկիրթ: Այդպիսի մարդու նիստն ու կացը, գործողությունները, ամեն ինչի նկատմամբ վերաբերմունքը յուրահատուկ են և օրինակելի: Ահա թե ինչու Սենեկան ասում էր. «Սկզբում սովորիր բարի բարքեր, նոր միայն իմաստություն»: Բարոյական զարգացումից զուրկ մարդը շրջապատի, հասարակության համար անտանելի«բեռ է»:

Բարոյականությունը շատ բարդ հասկացություն է. դրա էությունը ավելի լավ հասկանալու համար պահանջ է զգացվում այն շերտավորել,բաժանել մասերի և գտնել այն եզակին,որը կարող է արտահայտել բարոյականության բովանդակությունը: Պարզվում է,որ այդպիսի եզակին արարքն է: Ուրեմն կարելի է ասել՝ մարդու բարոյականության մասին դատում են նրա արարքներով: Ի՞նչ է արաքը:

Արարքը գործողություն է: Սակայն գործողությունը դեռևս արարք չէ, քանի որ գործողության իմաստը, որը նրա ներքին կողմն է,մեզ հայտնի չէ: Հայտնի է միայն արտաքին կողմը: Օրինակ մարդը կտրում է ծառը և հեռվից լսվում է կացնի հարվածները: Սա տվյալ գործողության արտաքին կողմն է. իսկ թե ինչու է կտրում ծառը՝ մեզ հայտնի չէ: Այսինքն հայտնի չէ գործողության ներքին կողմը կամ կտրելու իմաստը: Եթե մարդը ծառը կտրում է մի անօգնական, ծեր մարդու վառարանի համար, դա արդեն կլինի այդ գործողության ներքին կողմը կամ իմաստը: Ուրեմն գործողությունն արարք է համարվում այն ժամանակ, երբ հայտնի է դառնում տվյալ գործողության ներքին կողմը կամ իմաստը: Գործողության իմաստից էլ հայտնի է դառնում արարքի դրական կամ բացասական լինելը: Ահա դրա համար էլ առանձնացվում են դրական և բացասական արարքները: Այսպիսով. արարքն այն գործողությունն է, որի արտաքին և ներքին իմաստները բացահայտվում են:Հենց արարքի իմաստն էլ բնորոշում է այն կատարող մարդուն, նրա բարոյական զարգացման մակարդակը: Կուբացի գրող Խոսե Մարտինն ասում էր. «Ամենադժվար մասնագիտությունը բարոյական մարդ լինելն է»: Ելնելով սրանից՝ մեր ՝ ուսուցիչներիս խնդիրն է դրական արարքների կատարումը դարձնել դպրոցականի համար սովորույթ, նրա բնավորության կայուն գիծը, որպեսզի նա միշտ կատարի դրական արարքներ և դրա հիման վրա ձևավորի վարքի դրական

մշակույթ: Ըստ Հեգելի՝ «Երբ մարդը կատարում է այս կամ այն բարոյական արարքը, ապա դրանով նա դեռևս առաքինի չէ. նա առաքինի է միայն այն դեպքում,երբ վարքագծի այդ եղանակը հանդիսանում է նրա բնավորության մշտական գիծը:

Բարոյական դաստիարակությունն ու բարոյական զարգացումն ենթադրում են դրանք իրագործել ըստ տարիքային հնարավորությունների: Ելնելով այդ սկզբունքից՝ պետք է իմանալ, թե կրտսեր, դեռահասության, պատանեկության կոնկրետ տարիքներում բարոյական ինչ նորմեր նրանց մեջ սերմանել: Իսկ դրա համար ՝ դրանցից յուրաքանչյուրում պետք է գտնել բարոյական զարգացման առանցքը կամ հիմքը:

Կրտսեր տարիքում բարոյական զարգացման առանցք կամ հիմք կարող են հանդիսանալ այն նորմերը, որոնք համամարդկային արժեքներ են: Այս տարիքում բարոյական զարգացման հիմքը երեխաների մեջ հումանիստական հարաբերությունների ու փոխհարաբերությունների ձևավորումն է:Որպես բարոյական որակ,հումանիզմը ձևավորվում է ուրիշ մարդկանց հետ փոխհարաբերություններում:Այն հանդես է գալիս բարեկամության,բարեկեցության ,բարի արարքներ կատարելու պատրաստակամության մեջ. այսպես օրինակ՝ ինչպես օգնել ուրիշ մարդկանց,նրանց նկատմամբ լինել ուշադիր,կարեկցել նրանց:

Սովորողների հումանիստական դաստիարակությունն իրականացվում է գործունեության տարբեր ձևերով. առաջին հերթին միջանձնային փոխհարաբերությունների միջոցով:Օրինակ՝ դասարանական կոլեկտիվներում ընդգրկված բոլոր աշակերտների միջև պետք է թագավորեն առողջ փոխհարաբերությունները. նրանք պետք է լցված լինեն սիրով՝ մեկը մյուսի նկատմամբ,եթե պետք է՝ օգնեն իրար:Անհրաժեշտ է նրանց միջից արմատախիլ անել անտարբերությունը:Նրանք պետք է կարողանան կարեկցել իրար: Ուսուցչի հումանիստական վերաբերմունքը կարող է կենդանի օրինակ հանդիսանալ աշակերտի համար: Հենց այս տարիքում է, որ երեխան պետք է ըմբռնի, որ ինքը չի կարող ապրել միայնակ, հասարակությունից և մարդկանցից կտրված, որ մարդկանց հետ հաղորդակցումը, շփումը դեպի մարդասիրությունը տանող ճանապարհներն են:

Դեռահասության տարիքում երեխան դառնում է հետաքրքրասեր՝ առաջին հերթին իրեն շրջապատող մարդկանց նկատմամբ: Նրանց մեջ հայտնաբերում է այնպիսի որակներ, որոնք ինքը չունի: Ուստի կողմնորոշվում է դեպի նրանց օրինակը և սկսում իր համար փնտրել իդեալներ: Հենց այս տարիքում է, որ ուսուցիչը իր սանին կողմնորոշում է բոլոր արարքներում, օգնում նրան յուրացնելու բարոյական

զարգացմանն ու բարոյական հասկացություններին վերաբերող գիտելիքներ, դրանք դարձնում նրա համոզմունքները, նրա համար մշակում ինքնադաստիարակության ծրագիր: Նա խորհուրդներ է տալիս դեռահասին,թե ինչպես կիրառել և իրացնել արդ ծրագրերը:

Պատանեկության տարիքում դպրոցականի բարոյական դաստիարակությունն այլ ընթացք է ունենում, որովհետև այդ տարիքում ձևավորվում են նրա հայացքներն ու տեսակետները:Նա արդեն հասկանում է բարոյական հասկացությունների իմաստը,կարողանում է պահպանել բարոյական նորմերը:Կարողանում է նաև վերլուծել երևույթներն ու դրանց շուրջ ինքնուրույն դատողություններ անել և գնահատել:Այստեղ արդեն ուսուցիչը պետք է ոչ միայն պատանուն զինի բարոյականությանը վերաբերող տեսական գիտելիքներով,օգտագործի ուսումնական առարկայի ընձեռած բոլոր հնարավորությունները, այլև հաճախակի կազմակերպի բարոյական թեմաներով զրույցներ,բանավեճեր,քննարկումներ:

Բարոյական արժեքների ձևավորումը «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման ընթացքում

Ինչպես գիտենք « Հասարակագիտություն » առարկայի մեջ ընդգրկված է «Բարոյագիտություն» բաղադրիչը,որի նպատակն է սովորողներին ներկայացնել բարոյականության տեսության հիմնահարցերը, ամբողջացնել բարոյականության մասին սովորողի պատկերացումները, բարձրացնել բարոյական գիտակցությունը և համաշխարհայնացման արդի ժամանակաշրջանում նպաստել հայ պատանու բարոյափիլիսոփայական աշխարհայացքի ձևավորմանը:

Դասընթացի հիմնական խնդիրներն են՝

ա) Սովորողներին ծանոթացնել.

- Բարոյագիտության հիմնական հասկացություններին (կատեգորիաներ) , բարոյական առաջընթացի էությանն ու չափանիշներին,
- Բարոյականության էությունը, կառուցվածքային բաղադրիչներին, յուրահատկությանը, գործառույթներին
- Բարոյականության և ազատության հարաբերությանը,
- Ազգային ու համամարդկային բարոյամշակութային արժեքներին, բարոյական արժեհամակարգին,

բ) ցույց տալ ճշմարտության, արդարության, ազատության, բարու և գեղեցիկի կապը կյանքի նպատակի և իմաստի հիմնահարցերին,

գ) նպաստել անձի բարոյական մտահաղորդակցության ձևավորմանը,

դ) բացահայտել բարոյական իդեալի էությունը ազգայինի և համամարդկային տեսանկյունից,

ե) վերլուծել բարոյականություն հասկացության տարբեր սոցիալ-մշակութային մեկնաբանությունները,

ե) ընդլայնել սովորողների մտահորիզոնը:

Այսպիսով՝ «Բարոյագիտություն» բաղադրիչը հնարավորություն է տալիս ոչ միայն նորից խոսել բարոյական կարևորագույն արժեքների՝ բարության, հարգանքի, արդարության, պարտքի, խղճի, ամոթի, առաքինության, պատվի ,ազատության, կյանքի իմաստի, երջանկության մասին , այլև իրականությունը վերլուծել բարոյական հասկացությունների տեսանկյունից:

« Բարոյագիտություն » բաղադրիչի ուսումնասիրությունից հետո կատարել եմ մի շարք աշխատանքներ՝ պարզելու համար,թե որքանով եմ կարողացել իմ առարկայի շրջանակներում նպաստել բարոյական արժեքների ձևավորման սովորողների մոտ: Ստորև ներկայացնում եմ այն հարցման թերթիկը, որով փորձել եմ պարզել, թե սովորողները մարդու բարոյական որ հատկանիշներն են համարում կարևորագույնները:

N	**Բարոյական հատկանիշների ցանկ**	**միավոր**
1.	Բարություն	1 2 3 4 5
2.	Անկեղծություն	1 2 3 4 5
3.	Ազնվություն	1 2 3 4 5
4.	Մարդասիրություն	1 2 3 4 5
5.	Առաքինություն	1 2 3 4 5
6.	Խիղճ	1 2 3 4 5
7.	Ներողամտություն	1 2 3 4 5
8.	Արդարամտություն	1 2 3 4 5
9.	Անշահախնդրություն	1 2 3 4 5
10.	Գթասրտություն	1 2 3 4 5

11.	Հանդուրժողականություն	1 2 3 4 5
12.	Պատասխանատվություն	1 2 3 4 5
13.	Ազատություն	1 2 3 4 5
14.	Երջանկություն	1 2 3 4 5
15.	Պարտքի զգացում	1 2 3 4 5

Հաջորդը հանձնարարել եմ «Ինքնուրույն աշխատանք» ՝ հետևյալ հարցերի շուրջ

1. Ի՞նչը կամ ո՞վ է օգնել քո բարոյական աշխարհայացքի ձևավորմանը:

2. Ի՞նչ դեր ունի բարոյական գիտակցությունը՝ որպես հաջողության գրավական, քո մտածողության մեջ:

3. Ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ բարոյական վարքագիծը կյանքի տարբեր ոլորտների վրա՝ ընտանիք, մասնագիտություն, քաղաքական և հասարակական գործունեություն:

4. Ի՞նչ տրամաբանական կապ կարող ես գտնել կամքի և բարոյականության միջև:

5. Ինչո՞ւ մարդը պետք է լինի բարոյական:

Ներկայացրել եմ բարոյական երկընտրանքին վերաբերող իրավիճակներ, որոնք քննարկվել են աշակերտների կողմից.

Օրինակ 1. Տասնվեց տարեկան որդին հորը խոստովանում է, որ մասնակից է եղել հարևանի տան գողությանը: Հայրը կամ պետք է զանգի ոստիկանություն, կամ թաքցնի որդու արարքը:

Հանձնարարել եմ աշխատանք,որի արդյունքում աշակերտները մեկ շաբաթվա կտրվածքով ուսումնասիրել են հեռուստատեսությունը,համացանցը ՝ իմանալու համար,թե .

- ինչ արժեքներ են գովազդվում
- արդյոք նրանք կրում են այդ արժեքները
- արդյոք համացանցը ազդում է նրանց կողմից կարևորվող արժեքների վրա

Անցկացրել եմ զրույցներ բարոյական արժեքների շուրջ,բարոյահոգեբանակն բնույթի գեղարվեստական մի շարք երկերի ընթերցում և քննարկում,ստեղծագործական աշխատանքներ և պարզել բարոյագիտություն բաղադրիչի ուսուցանման

կարևորությունը սովորողների մոտ բարոյական արժեքների ձևավորման գործում: Արժեքների ուսումնասիրությունից հետո աշակերտները կարևորել են Արիստոտելի հայտնի միտքը. « Նա,ով գիտելիքներով առաջ է գնում,բայց բարոյականությամբ հետ է մնում,ավելի շատ է հետ գնում,քան առաջ»:

Գեղագիտական դաստիարակություն:Գեղագիտական արժեքների ձևավորումը «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման ընթացքում

Համակողմանի ու ներդաշնակ զարգացած մարդը կարող է համարվել նա, ով ունի նաև գեղագիտական դաստիարակություն :Գեղագիտական դաստիարակությունը մարդու գեղագիտական որակների՝ համապատասխան ընդունակությունների, գեղագիտական գործունեության կարողությունների ու հմտությունների, գեղագիտական ճաշակի ձևավորման պրոցեսն է:

Գեղագիտական դաստիարակության նպատակը և խնդիրները:

Գեղագիտական դաստիարակության հիմնական նպատակը իրականության և արվեստի նկատմամբ մարդու գեղագիտական հարաբերության՝ իբրև անձնավորության ընդհանուր զարգացման կարևոր բաղադրամասի ձևավորումն է: Իսկ գեղագիտական դաստիարակության խնդիրները բազմազան են ու բազմաբնույթ: Դրանց շարքին են դասվում.

ա) սովորողների գեղագիտական ընկալումները

բ) գեղագիտական պատկերացումներն ու դատողությունները

գ) գեղագիտական մտածողությունն ու համոզմունքները:

Առանց այդ որակների անձը չի կարող արժևորել ու գնահատել արվեստի գործերը , նա չի ունենա գեղագիտական ճաշակ: Իմանալու համար , թե ինչ է գեղագիտական ճաշակը , թե ինչպես իրականացնել դրա դաստիարակությունը , նախ պետք է իմանալ, թե տվյալ սովորողն ինչն է գերադասում գեղանկարչության, երաժշտության, գեղարվեստական գրականության մեջ, թե որքանով է ընդունակ վերլուծել գրական կերպարը, թե ինչպես է հագնվում, կառավարում իր նիստ ու կացը, իր առօրյան, իր

շարժումները: Սրանք այն չափանիշներն են, որոնք էլ որոշում են անձի գեղագիտական ճաշակը, քանի որ այն գեղեցիկը զգալու ու գնահատելու ընդունակությունն է, գեղեցկության չափանիշները հասկանալու կարողությունը, գեղեցիկի նկատմամբ հուզական զգայունակությունը:ճիշտ զարգացած գեղագիտական ճաշակը մարդուն օգնում է գեղագիտորեն գնահատելու իրականությունը,իր կյանքում,կենցաղում ու գործունեության մեջ արմատավորելու գեղեցիկը:Գեղագիտական ճաշակի մեծագույն դաստիարակն է բնությունը:Այդ են վկայում անցյալի և ներկայի շատ խոշոր մտածողների, արվեստագետների խոստովանություններ:

Ժամանակակից մարդու կյանքը անբաժան է գեղեցիկից: Մարդու կենցաղում օգտագործվող ամենաբարձրագույն իրերից մինչև նրա բնակարանը, փողոցը, քաղաքը, երկիրը բնորոշող կարևորագույն արժեքներից մեկը գեղեցիկն է: Եվ իր ընտրությունը կատարելիս մարդը միշտ առաջնորդվում է նաև գեղեցիկով: Գեղագիտական արժեքներն ընկած են արվեստի, նրա բոլոր տեսակների հիմքում: Ավելին ՝ դրանց բացահայտումը արվեստի նպատակն է: Եվ պատահական չէ, որ արվեստի գործը՝ երգը, երաժշտությունը, գեղանկարը, քանդակը, թատերական ներկայացումը, կինոնկարը սովորաբար մենք բնութագրում ենք նաև այդ արժեքներով:

Դպրոցում գեղագիտական դաստիարակությունն իրականացվում է ըստ տարիքային առանձնահատկությունների:Այսպես՝ կրտսեր դպրոցականների հետաքրքրությունները մակերեսային են, ցրված:Նրա հուզական ապրումը պարզունակ է:Արվեստի ստեղծագործությունների ընկալումը նրա համար ձանձրալի է, նրան ավելի շատ հրապուրում է իր կողմից իրականացվող աշխատանքը:

Դեռահասն ունի բավականաչափ գիտելիքներ,որոնց միջոցով հասկանում է շրջապատող աշխարհի երևույթները: Ուրեմն ՝ արվեստը, նրա բուն բովանդակությունն ընկալելիս, ի տարբերություն կրտսեր դպրոցականի, նա ձգտում է թափանցել երևույթների, առարկաների էության մեջ, որի համար հիմք են հանդիսանում հասարակական չափանիշները, իր գիտելիքներն ու փորձը: Դեռահասը արվեստի ստեղծագործություններն ինքնուրույնաբար է ընտրում ու գնահատում: Նա արդեն այն անձն է, որ իր առջև ինքնադաստիարակության խնդիր է դնում: Ինքնուրույնաբար որոշում է, թե արվեստի որ ճյուղին է տիրապետելու : Այլ կերպ ասած, դեռահասը ձգտում է իր մեջ եղած ի քնահաստատման, ինքնարտահայտման պահանջին հագուրդ տալ:

Ավագ դպրոցականը, ի տարբերություն դեռահասի, ունի իր սեփական հայացքները, համոզմունքները, այլ կերպ ասած՝ ձևավորած իր աշխարհայացքը, որը նրա համար հանդիսանում է հիմք՝ գեղագիտական գնահատումների համար: Ավագ դպրոցականը կարողանում է կյանքի գեղագիտական կողմերն ու առաձնահատկությունները ոչ միայն իրարից տարբերել, այլ նաև դրանց մեջ ճիշտ ընտրություն կատարել: Նրա մեջ ինքնահաստատումն ու կենսական ինքնորոշումն արդեն, դառնում են անհետաձգելի պահանջմունքներ: Ավագ դպրոցականը կարողանում է գնահատել արվեստի՝ մարդկային կյանքի համար ունեցած նշանակությունը: Արվեստի պարապմունքներին մասնակցությունը, գեղարվեստական ստեղծագործությունների ուսումնասիրությունը նրա համար դառնում է կենսական պահաջմուքն, և ապա՝ իր հուզական զգացմունքային ոլորտում կենտրոնական տեղ է գրավում մարդու ու նրա վարքի գեղագիտական գնահատումը:

Ընդհանրապես, գեղագիտական դաստիարակությունը սերտորեն կապված է, ավելին՝ ինչ-որ իմաստով միահյուսվում է ինչպես բարոյական դաստիարակության, այնպես էլ ինտելեկտուալ զարգացման հետ: Այդ կապերին դեռևս հինգերորդ դարում անդրադարձել է հայ պատմիչ և փիլիսոփա Եզնիկ Կողբացին, ով գտնում է, որ մարդու ստեղծած գեղեցիկը պետք է ծառայի բարուն : Գեղեցիկի և բարու փոխհարաբերությունները և համապատասխան արժեքների ձևավորման խնդիրները եղել են բոլոր ժամանակների հետազոտողների ուշադրության կենտրոնում: Որոշ հետազոտողներ հակված են գեղագիտական դաստիարակությունը ներառել բարոյական դաստիարակության մեջ: Հայտնվում է նաև տեսակետ, ըստ որի գեղեցիկը ծառայում է որպես բարոյական դաստիարակվածության մակարդակ: Գեղագիտական դաստիարակության շնորհիվ հնարավոր է դառնում նաև անձի հոգևոր աշխարհի գեղագիտական, բարոյական և ինտելեկտուալ բաղադրիչների միջև լիակատար ներդաշնակության հաստատումը:

Ինչպես արդեն նշել եմ, հասարակագիտություն առարկայի մեջ ներառված է նաև գեղագիտություն բաղադրիչը,որը հնարավորություն է տալիս իրականությունը վերլուծել գեղագիտական հասակացությունների տեսանկյունից,տարբերակել վեհը,գեղեցիկը: Ճիշտ է՝ գեղեցիկը ճանաչելու, հասկանալու, զգալու, ինչպես նաև գեղագիտական այլ ունակությունների նախադրյալներ մարդուն տրվում են ժառանգաբար,բայց դրանց ձևավորումը կարող է իրականացնել հասարակագիտություն առարկան:Հասարակագիտության բաղադրիչի մեջ հատկապես

կարևորվում է գեղեցիկը արվեստում,այն դիտում որպես մարդու ինքնաարտահայտման միջոց:

Պարզելու համար,թե աշակերտները որքանով են կապված արվեստի այս կամ այն ճյուղի հետ՝ հանձնարարել եմ աշխատանք. ուսումնասիրել հայ արվեստագետների կյանքը և գործերը,ներկայացնել նրանց կյանքի հետ կապված հետաքրքիր դրվագներ,նրանց մասին պատմող ֆիլմեր և հաղորդումներ: Իսկ,թե ինչու հայ արվեստագետների մասին,որովհետև նկատել եմ գլոբալացման վտանգ:

Կատարված աշխատանքի արդյունքում աշակերտները եկել են այն եզրահանգման,որ մշակույթը ցանկացած ազգի ոգին է և առաջնակարգ դեր ունի յուրաքանչյուրի կյանքում ոչ միայն ընդհանուր քաղաքակրթության մակարդակով, այլև ազգապահպանության առումով:

Եզրակացություն

Գաղտնիք չէ,որ յուրաքանչյուր ժամանակաշրջան առանձնանում է իր սերնդին բնորոշ առանձնահատկություններով, կողմնորոշումներով : Դա է պառճառը, որ ավագ սերնդի կողմից ընդունված հասարակական կյանքի որոշ նորմեր կարող են տարբերվել հաջորդ սերնդի հայացքներից: Վերջիններս արագ հարմարվելով նոր իրավիճակին՝ կարող են ձևավորել նոր արժեքային համակարգ,որը կարող է տարբերվել նախորդից:

Ինչ խոսք, հասարակությունը չի կարող զարգանալ միայն պահպանողականության հիմքի վրա, քանի որ անընդհատ գալիս է նորը՝ համալրելով եղած արժեքները:Պարզապես քայլելով ժամանակին համընթաց, հաղորդակից լինելով համամարդկային արժեքներին՝ անհրաժեշտ է առաջնությունը տալ ազգայինին:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման գործում լուրջ անելիքներ ունի դպրոցը, որը պետք է լինի օրինակելի տարածք, որտեղ հաստատուն են էթիկական նորմերը, որտեղ աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Հենց դպրոցը պետք է պայքարի հանրության մեջ տարածված արատների դեմ և կերտի բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակներն իրագործելու մեջ մեծ պետք է լինի հատկապես ուսուցչի դերը: Վերջինս պետք է տիրապետի ոչ միայն մանկավարժության անցյալի ժառանգությանն ,այլև ժամանակակից փորձին ու մեթոդաբանությանը: Դասավանդման գործընթացում ուսուցիչը իր նպատակների իրագործման համար պետք է տեսական դրույթները զուգորդի սովորողների գործնական հմտությունների հետ: Ուսուցման գործընթացում կախված թեմայից, դասի նպատակից,դասարանից, քննարկվող հիմնախնդրի և սովորողների առանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից, կարող են ընտրվել ուսումնական գործունեության հետևյալ տեսակները՝ ինքնավերլուծություն,զրույցներ և հարցազրույցներ շրջապատող մարդկանց տարբեր խմբերի հետ, ՁԼՄ-ից ստացված տեղեկատվության վերլուծություն, արվեստի տարբեր գործերի ուսումնասիրում, բարոյահոգեբանական բնույթի հիմնախնդիրներ պարունակող գեղարվեստական երկերի ընթերցում և քննարկում, հիմնախնդրի հետազոտություն,բաց քննարկումներ,դերայի խաղեր և այլն:

Եվ այսպես, պետք է փաստել, որ արժեհամակարգի ձևավորման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի դեր ունի

«Հասարակագիտություն» առարկան: Իսկ, որպես ամփոփում, կարելի է փաստել, որ յուրաքանչյուր ազգի կայունության և անկախության կարևոր երաշխիքն է ճիշտ ազգային արժեքային համակարգի ստեղծումն ու պահպանումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Անահիտ Մենեմշյան,Զարուհի Սարգսյան,Վարդուհի Ստեփանյան .Ձեռնարկ «Հայ դեռահասի արժեհամակարգի փոխակերպումները էլեկտրոնային լրատվամիջոցների ազդեցությամբ»:

2. Անուշ Մկրտչյան «Անձի հոգեբանական տեսական և կիրառական հարցեր» գիտական հոդվածների ժողովածու:

3. Ամիրջանյան Յու.,Ա.,Սահակյան Ա. Ս. «Մանկավարժություն»:

4. Ա. Բալայան «Փիլիսոփայություն» դասախոսությունների համառոտագրեր:

5. Ա.Ա.Բալյան «Դպրոցականների գեղագիտական դաստիարակությունը»:

6 .Վ.Ա.Հովսեփյան «Գեղագիտական ուսմունքների պատմություն»:

7. «Հասարակագիտություն» ավագ դպրոցի չափորոշիչ: